

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ (ՎԱԿՑԻՆԱ) ՄԱՍԻՆ

**MMR** (կարմրուկ, խոզուկ և կարմրախառ) **ՊԱՏՎԱՍՏՈՒՄ**

*Ինչ ե՞ք պարտավոր իմանալ*

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis).

Պատվաստումների մասին բազմաթիվ տեղեկություններ առկա են իսպաներենով և այլ լեզուներով հետևյալ կայքում՝ [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis):

**1** Ինչու՞ ստանալ պատվաստում

Կարմրուկը, խոզուկը և կարմրախառը ծանր հիվանդություններ են: Պատվաստումներից առաջ դրանք շատ տարածված էին, հատկապես երեխաների շրջանում:

**Կարմրուկ**

- Կարմրուկի հարուցիչը առաջացնում է մաշկի ցան, հազ, արտադրություն քթից, աչքի բորբոքում և ջերմություն:
- Կարող է հանգեցնել ակնանջի բորբոքման, թոքաբորբի, նոպաների (ցնցումներ և աչքերի լայն բացվածություն), ուղեղի ախտահարման և մահվան:

**Խոզուկ**

- Խոզուկի հարուցիչը առաջացնում է ջերմություն, գլխացավ, մկանների ցավ, ախորժակի կորուստ և զեղձերի այտուցում:
- Կարող է հանգեցնել խլության, մենինգիտի (ուղեղաթաղանթի և ողնուղեղի թաղանթի բորբոքում), ամորձիների կամ ձվարանների ցավոտ այտուցման և հազվադեպ՝ անլուծելի:

**Կարմրախառ (զերմանակյան կարմրուկ)**

- Կարմրախառը առաջացնում է մաշկի ցան, հոդաբորբ (հիմնականում կանանց մոտ) և ցածր ջերմություն:
- Եթե հղի կինը վարակվի կարմրախառով, ապա կարող է վիժել կամ երեխան կարող է ծնվել լուրջ արատներով:

Այն հիվանդությունները տարածվում են օդա-կաթիլային ճանապարհով: Դրանցով հեշտությամբ կարող էք վարակվել՝ գտնվելով որևէ մեկի կողքին, որն արդեն կրում է հիվանդության հարուցիչը:

Կարմրուկի, խոզուկի և կարմրախառի (MMR) պատվաստումը պաշտպանում է երեխաներին (և մեծահասակներին) բոլոր այս երեք հիվանդություններից:

Շնորհիվ հաջողությամբ իրագործված պատվաստման ծրագրերի, այս հիվանդություններն այժմ շատ ավելի քիչ տարածում ունեն ԱՄՆ-ում, քան նախկինում: Մակայն եթե դադարեցնենք պատվաստումը, հիվանդությունները նորից կտարածվեն:

**2** Ո՞վ պետք է ստանա MMR պատվաստում և ե՞րբ:

Երեխաները պետք է ստանան MMR-ի պատվաստման 2 դեղաբաժին:

- Առաջին դեղաբաժին՝ 12-15 ամսական հասակում
- Երկրորդ դեղաբաժին՝ 4-6 տարեկան հասակում (կարող է տրվել ավելի շուտ, եթե անցել է առնվազն 28 օր 1-ին դեղաբաժնից հետո)

12 ամսականից փոքր որոշ երեխաներ պետք է ստանան MMR-ի դեղաբաժին, եթե ճանաչողում են երկրից դուրս: (Այս դեղաբաժինը չի հաշվվում ըստ ծրագրի տրվող մյուս դեղաբաժինների մեջ)

Որոշ չափահասներ նույնպես պետք է ստանան MMR-ի պատվաստում: Սովորաբար 18 տարեկանից բարձր յուրաքանչյուր անձ, ով ծնվել է 1956թ.-ից հետո, պետք է ստանա MMR-ի առնվազն մեկ դեղաբաժին: Հակառակ դեպքում, պետք է ցույց տա, որ կա մ նախկինում պատվաստվել է կա մ տարել է բոլոր երեք հիվանդությունները:

MMR պատվաստանյութը կարող է տրվել այլ պատվաստումների հետ միաժամանակ:

1-12 տարեկան երեխաներին կարող է տրվել «համակցված» պատվաստանյութ, որը կոչվում է MMRV և պարունակում է MMR-ի և ջրծաղիկի պատվաստանյութեր: MMRV-ի մասին առկա է առանձին պատվաստման տեղեկատվական թերթիկ:

**3** Որոշ մարդկանց հակացուցված է ստանալ MMR պատվաստում կամ նրանք պետք է սպասեն որոշ ժամանակ:

- Ցանկացած անձ, ով երբևէ նեոմիցին հակաբորբոքային դեղամիջոցի կամ MMR պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ ունեցել է կյանքի համար վտանգավոր ալերգիկ ռեակցիա, չպետք է ստանա պատվաստում: Հայտնեք Ձեր բժշկին, եթե ունեք ուժեղ ալերգիաներ:
- Ցանկացած անձ, որը MMR-ի կամ MMRV-ի պատվաստանյութի նախկին դեղաչափից ունեցել է կյանքի համար վտանգավոր ալերգիկ ռեակցիա, չպետք է ստանա մյուս դեղաչափը:
- Այն անձանց, որոնք դեղաչափի ներարկման նշանակված օրը գտնվում են հիվանդ վիճակում, կարող է խորհուրդ տրվել, որ սպասեն մինչև ապաքինվեն՝ նախքան MMR պատվաստում ստանալը:
- Հղի կանայք չպետք է ստանան MMR-ի պատվաստանյութ: Այն հղի կանայք, որոնք պետք է ստանան պատվաստանյութ, պետք է սպասեն մինչև ծննդաբերելը: MMR-ի պատվաստանյութ ստանալուց հետո 4 շաբաթվա ընթացքում կանայք պետք է խուսափեն հղիանալուց:



U.S. Department of Health and Human Services  
Centers for Disease Control and Prevention

- Հայտնեք Ձեր բժշկին, եթե պատվաստանյութ ստացող անձը.
  - ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի վարակակիր է կամ ունի իմունային համակարգի վրա ազդող այլ հիվանդություն
  - Քուժում է ստանում այնպիսի դեղամիջոցներով, որոնք ազդում են իմունային համակարգի վրա, օրինակ՝ ստերոիդներ.
  - Ունի որևէ տեսակի քաղցկեղ
  - Քաղցկեղի դեմ բուժում է ստանում ճառագայթամբ կամ դեղամիջոցներով
  - Երբևէ ունեցել է տրոմբոցիտների ցածր քանակ (արյան կազմի խախտում)
  - Վերջին 4 շաբաթվա ընթացքում ստացել է այլ պատվաստանյութ
  - Վերջերս ստացել է արյան փոխներարկում կամ արյան քաղաղրամաս հանդիսացող նյութեր
- Վերը նշվածներից ցանկացածը կարող է պատճառ հանդիսանալ պատվաստումը չստանալու համար կամ հետաձգելու դրա ընդունումը:

**4** Որո՞նք են MMR-ի պատվաստման ռիսկերը

Պատվաստումը, ինչպես ցանկացած դեղամիջոց, կարող է պատճառել լուրջ խնդիրներ, ինչպես օրինակ՝ ուժեղ ալերգիկ ռեակցիաներ:

Լուրջ վնասներ առաջացնելու կամ մահվան պատճառ դառնալու MMR-ի պատվաստման ռիսկը չափազանց փոքր է:

MMR-ի պատվաստում ստանալը շատ ավելի ապահով է, քան կարմրուկով, խազուկով կամ կարմրախտով հիվանդանալը:

MMR-ի պատվաստում ստացած մարդկանց մոտ սովորաբար ոչ մի խնդիր չի առաջանում:

- Թույլ արտահայտված նշաններ**
- Տենդ (6-ից 1 մարդու մոտ)
  - Թույլ ցան (20-ից մոտավորապես 1 մարդու մոտ)
  - Գեղձերի այտուցում՝ այտերին կամ պարանոցին (75-ից 1 մարդու մոտ)

Այս նշանները սովորաբար առաջանում են դեղաբաժնի ներարկումից 6-14 օրվա ընթացքում: Ավելի քիչ հավանականությամբ կարող են առաջանալ երկրորդ դեղաբաժնից հետո:

- Միջին ուժգնության նշաններ**
- Տենդից առաջացող նոպաներ (ցնցումներ և աչքերի լայն բացվածություն), (3000-ից մոտավորապես 1 դեպքում)
  - Ժամանակավոր ցավ և փայտացում հոդերում, հիմնականում դեռահասների կամ չափահաս կանանց մոտ (4-ից 1 դեպքում)
  - Տրոմբոցիտների անցողիկ ցածր հաշվարկ, որը կարող է առաջացնել արյունահոսություն (30000-ից մոտավորապես 1 դեպքում)

**Ծանր նշաններ (շատ հազվադեպ)**

- Լուրջ ալերգիկ ռեակցիա (միլիոն դեղաբաժնիներից 1-ից էլ պակասի դեպքում)
- Արձանագրվել են նաև այլ լուրջ խնդիրներ՝ երեխայի կողմից MMR պատվաստանյութ ստանալուց հետո, այդ DCH-0454A

թվում.

- Նյութաթուն
- Երկարատև նոպաներ, կոմա կամ գիտակցության կորուստ
- Ուղեղի մշտական խանգարում

Մրանք այնքան հազվադեպ են, որ դժվար է հաստատել, որ առաջացել են պատվաստման հետևանքով:

**5** Ի՞նչ անել, եթե ուժեղ ռեակցիա է առաջացել

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնել

- Որևէ արտասովոր վիճակ, օրինակ՝ բարձր ջերմություն կամ անսովոր վարք: Լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններից կարող են լինել՝ դժվար շնչառություն, ճայնի խոտրություն կամ խզոց, եղնջացան, գունատություն, թուլություն, արագ սրտխփոց կամ գլխապտույտ:

Ի՞նչ պետք է անել:

- Չանգահարեք բժշկին կամ սովյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
- Հայտնեք ձեր բժշկին, թե ինչ է պատահել, կանկրետ օրը, ժամը և երբ եք ստացել պատվաստում:
- Խնդրեք Ձեր բժշկին հաղորդել ալերգիկ ռեակցիայի մասին՝ լրացնելով «Պատվաստման բացասական ազդեցությունների դեպքերի հաղորդման համակարգ» ձևը (VAERS): Դուք նույնպես կարող եք հաղորդել դրա մասին VAERS-ի կայքի միջոցով՝ [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov) կամ զանգահարելով 1-800-322-7967:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

**6** Պատվաստումից վնասվելու փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստումից վնասվելու փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) սկսվել է 1986թ.-ին:

Այն անձինք, որոնք գտնում են, որ վնասվել են պատվաստման հետևանքով, կարող են այս ծրագրի վերաբերյալ, ինչպես նաև բողոք ներկայացնելու մասին իմանալ՝ զանգահարելով 1-800-338-2382 կամ այցելելով VICP-ի կայք՝ [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation):

**7** Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ տեղեկություններ ստանալ

- Հարցրեք ձեր բժշկին:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության ղեկավարամենս: 1-888-767-4687
- Դիմեք Հիվանդությունների հսկողության և կանխման կենտրոնին (CDC), Prevention (CDC):  
- Չանգահարեք՝ 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) կամ  
- Այցելեք CDC-ի կայք՝ [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines)


Vaccine Information Statement (Interim)

**MMR Vaccine**  
Armenian

4/20/2012

42 U.S.C. § 300aa-26  
Translation provided by the California Department of Public Health  
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

Office Use Only



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամքապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: